

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝  Ա. Ակրպոյան

2024 թվականի ընթացքում իրականացված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

Շրջակա միջավայրի նախարարության ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, մասնավորապես՝ ամենամսյա ստուգայցեր և մշտադիտարկման աշխատանքներ ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում՝ խոշոր կաթնասունների և տարածքում հանդիպող, բնադրվող, չվող, նստակյաց թռչնատեսակների շրջանում տարբեր կլիմայական գոտիներում սեզոնային առանձնահատկություններից և ազդեցություններից տեղի ունեցող փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով: Տեսակների ապրելավայրերի, անտառմիջյան և լեռնային անցումային արահետների, փորվածքների, կղկղանքի, թողած հետքերի և ոտնահետքերի ուսումնասիրություններ՝ տեսակների մոտ ներկա վիճակի գնահատման, արտաքին, ներքին պարագիտների և հիվանդությունների առկայությունն ուսումնասիրելու նպատակով:

Հունվարին իրականացված ուսումնասիրությունների ընթացքում «Շիկահող» պետական արգելոցի տարածքում արձանագրվել է ժապավենաձև որդերի ներկայացուցիչ՝ եզան երիզորդով վարակված եվրոպական այծյամի թողած հետքեր և կղկղանք: Այծյամի անկման դեպքեր չեն արձանագրվել:

Նոյեմբերին պարագիտների ազդեցությունից արտաքին մաշկային խնդիրներ են նկատվել տարածքում հանդիպած շնագայլերից մեծ մասի մոտ.ինչը կարող է գիշատիչների մոտ վարակման առիթ դառնալ: Նախատեսվում է առաջիկա ամիսներին շարունակել ուսումնասիրությունները՝ հասկանալու համար հիվանդության տարածվածությունն ու զարգացող խնդիրները:

Իրականացվել են ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում հանդիպող, բնադրվող, չվող թռչնատեսակների գարնանային և

աշնանային չուի ուսումնասիրություններ, որոնց ընթացքում անվանատիպ արձանագրվել են չվող տեսակների գարնանային վերադարձն ու աշնանային չուն:

Նոյեմբերին կատարված ուսումնասիրությունների ընթացքում «Արևիք» ազգային պարկի տարածքում արձանագրվել է Սև անգղ թռչնատեսակի զույգ, որը ՀՀ Կարմիր գրքում գրանցված է, որպես վտանգված տեսակ: Վերջին տասնամյակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում տեսակը երբևէ չէր արձանագրվել: Նախատեսվում է բնադրման շրջանում մասնաճյուղի տարածքում իրականացնել Սև անգղի ուսումնասիրություն՝ տեսակի վերաբերյալ նոր քանակային և տեսակային տվյալներ ձեռք բերելու նպատակով:

Բոլոր եռամսյակներում իրականացվել են «Շիկահող» արգելոցի և «Ձանգեզուր» արգելավայրի տարածքներում ֆոտոխցիկ սարքավորումների տեղադրում, այնուհետև պարբերաբար հիշողության քարտերի ստուգում և տեղադրում: Ֆոտոխցիկների միջոցով արձանագրվել են կաթնասունների հետևյալ տեսակները՝ Գորշ արջ, Վայրի խոզ, Եղեգնակատու, Անտառային կատու, Փորսուղ, Քարակզաքիս, Եվրոպական այծյամ, Սովորական շնագայլ, Բեզուարյան այծ, Սովորական աղվես, աքիս, Դաշտամուկ, Անտառային քնամուկ: Արձանագրվել են նաև թռչնատեսակներ՝ Ամուրիկ, Սովորական քարաթռչնակ, Սև կեռնեխ, Երգող կեռնեխ, Սևուկ կարմրատուտ, Լեռնային ձիաթռչնակ, Եղնջաթռչնակ և Եղջերավոր արտույտ:

Մոնիթորինգի իրականացման հիմք են հանդիսացել նաև ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ներում տեղադրված առցանց տեսահսկման համակարգերի կողմից արձանագրված կենդանատեսակները:

Մշտադիտարկման աշխատանքների ընթացքում 2 անգամ արձանագրվել են Հայկական մուֆլոնների խմբեր:

Համագործակցություն.

Շրջակա միջավայրի նախարարության հետ համագործակցության շրջանակներում, «Ձանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի հետ համատեղ ԲՀՊՏ-ներում 2024 թվականի ընթացքում իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, այդ թվում՝

ԲՀՀ ներկայացուցիչների հետ համատեղ, Ընձառյուծի պահպանության ծրագրի շրջանակում, իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ: Ֆոտոբռնիչ սարքերի կողմից պարբերաբար արձանագրվել է Ընձառյուծ: Գարնանն առաջին անգամ արձանագրվել է էգ առանձնյակ, որը վերջին տարիների ընթացքում միակն է Հայաստանում: Էգ առանձնյակը պարբերաբար գրանցվում է ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ում:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Չեխիայի միջատաբանական ընկերության կողմից 2024 թվականի ընթացքում մոտ 6 անգամ իրականացվել են միջատների ուսումնասիրություններ և մոնիթորինգ:

ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողների կողմից «Շիկահող» պետական արգելոցում, «Արևիք» ազգային պարկում և «Սոսու պուրակ» արգելավայրում իրականացվել են բուսական աշխարհի ուսումնասիրություններ:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից «Հայաստանի թռչնաֆաունայի բարկոդավորում» ծրագրի շրջանակում իրականացվել են ուսումնասիրություններ:

«ԲրդԼինքս Հայաստան» ՀԿ-ի կողմից իրականացվել է թռչունների մոնիթորինգ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի բնության հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող «Կենսաբազմազանության առաջնահերթ ցուցիչ տեսակների մոնիթորինգի պլան Հայաստանի համար 2023-2032թթ» նախագծի շրջանակում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ա.Լ. Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտի, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և «Կաթնասունաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից պարբերաբար իրականացվել են բուսական աշխարհի, կրծողների և միջատների մոնիթորինգ:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ակադեմիայի ուսանողների համար «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի տարածքում ՀՀ ԳԱԱ երկրաբանության գիտությունների ինստիտուտի և

Շվեյցարիայի Զուռասիկա թանգարանի համագործակցության շրջանակներում, կազմակերպվել է միջազգային հնէաբանական դաշտային դպրոց:

Իրականացվել է գիտարշավ՝ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության հնստիտուտի գիտաշխատողների կողմից: Հետազոտություններն իրականացվել են երկու ուղղությամբ՝ քարաքոսաբանական և անտառագիտական: Քարաքոսաբանական հետազոտությունների շրջանակում ուսումնասիրվել են «Շիկահող» պետական արգելոցի, «Խուստուփ» պետական արգելավայրի և «Արևիք» ազգային պարկի տարածքներում հանդիպող քարաքոսերի հիմնական տեսակները: Անտառագիտական ուսումնասիրություններ են իրականացվել «Շիկահող» պետական արգելոցի Կենու և հաճարենու պուրակներում, կատարվել է նմուշառում՝ տեսակների դինամիկայի դիտարկման նպատակով:

Ըստ նախնական պայմանավորվածության՝ վերոնշյալ կառույցներն ու կազմակերպությունները՝ իրականացված գիտական ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները սահմանված կարգով կտրամադրեն նախարարությանը: